

փաստերուն ծանօթանալ՝ ինքզինքս համոզելու համար :

— Ես չեմ կրնար իմ ունեցած տեղեկութիւններու աղբիւրը Ձեզի ծանօթացնել : Ասիկա Ձեզի օգուտ մը չի տար , սակայն ինծի մեծ վնաս կրնայ պատճառել : Ես միայն Ձեզի կը փտասահայնեմ , թէ իմ ըրած յայտնութիւնը բացարձակ ճշմարտութիւնն է : Տարակուսելու պէտք չունիք :

— Բայց այդ մարդիկը հաշիւ չեն ընէր , — կ'ըսեմ դիմամբ՝ հասկնալու համար թէ ինքն ալ բան մը գիտէ՞ , — թէ Հայաստանի դէմ արջաւանք մը միաժամանակ պիտի նըկատուի Խորհրդային Ռուսաստանի դէմ , քանի որ այս վերջինս չպիտի ցանկար Թուրքիոյ կողմէն արջաւանք մը , 914-ի սահմաններէն ներս :

— Եթէ տեղեկութիւն չունիք , յայտնեմ նաեւ , — ըսաւ փաշան , — որ հարցին այդ կողմը արդէն կարգադրուած է , եւ եթէ կ'ուզէք՝ պատերազմի ծրագիրը ատկէ ծաղում առած է : Առանց Ռուսաստանի հաւանութեան միլիտները համարձակութիւն չէին կրնար ունենալ արջաւանք կտրուի դէմ : Խորհրդային կառավարութիւնը դադանի համաձայնութեամբ մը Թուրքիոյ յանձնած է մինչեւ 1878-ի սահմանները , իրեւ վարձատրութիւն , քաղաքական գանազան նկատումներով : Այնպէս որ , այդ կողմէն վախ չունին :

— Ուրեմն , Ձեր կարծիքով , Խորհրդային կառավարութիւնը համաձայն է այս արջաւանքի ծրագրին :

— Ատկէ տեղեկութիւն չունիմ : Սակայն , ի՞նչ ձեւով ալ մտածեն բոլշեւիկները , միլիտներու կարծիքն այն է , թէ դադանի համաձայնութեան հողային մասի իրազործումը առանց պատերազմի չի կրնար ըլլալ , տրուած ըլլալով , որ հայերը խտորէն պիտի դիմադրեն ուրեք հողային զիջումի :

— Բայց , փաշա , թուրքերը պատերազմի մէջ են Յունաստանի դէմ եւ մեծ ուժեր չպիտի կրնան զրկել Հայաստանի դէմ : Կը հաւատամ , թէ այդ արջաւանքը յաջողութիւն պիտի ունենայ :

— Այն համոզումը ունին , թէ պատերազմը անգամ մը սկսելէ յետոյ , բոլշեւիկները

պարտաւորուած պիտի ըլլան իրենց աջակցելու ամէն ձեւով : Այսօրուան իմ հոս դալուս նպատակը , սակայն , միայն այս տեղեկութիւնները յայտնել չէր , քանի որ ինծի համար բոլորովին պարզ է , թէ միլիտներու եւ բոլշեւիկներու միջեւ համաձայնութիւնը կատարուել է : Պատերազմը անխուսափելի է ուշ կամ կանուխ : Գիտեմ , թէ թուրքերը անգամ մը եւս պիտի օդտազործեն քիւրդ ժողովուրդը՝ դայն քշելով Հայաստանի դէմ , — բան մը , որ մէկ կողմէն , կրկին քիւրդ ժողովուրդը մեղսակից պիտի դարձնէ կոտորածի եւ մարդասպանութեան , միւս կողմէ՝ քաղաքականօրէն վտանգաւոր պիտի դառնար քիւրդ ժողովուրդին համար : Այս պատճառով ես կ'ուզեմ անցնել Քիւրտիստան՝ արգելելու քրդական դործակցութիւնը : Եւ որովհետեւ մեր ընտանիքը մեծ ազդեցութիւն ունի քրդական լայն շրջանակներու վրայ , կը հաւատամ , թէ պիտի կրնամ արգելել քիւրդերու մասնակցութիւնը : Ասիկա պիտի ըլլայ մեծ օգուտ մը Հայաստանի համար : Ես կը փափաքիմ երթալ Հայաստան տեսնուել կառավարութեան եւ պատերազմական նախարարութեան հետ , տալ պէտք եղած տեղեկութիւնները , համաձայնիլ անոնց հետ որոշ խնդիրներու շուրջ , եւ որոշ փլանի մը համաձայն մտնել Քիւրտիստան : Դժբախտաբար , Բաթումի վրայէն Հայաստան մեկնելու համար ոչ անցազիր եւ ոչ ալ վիզէ կրնամ ստանալ : Պիտի խնդրեմ , որ դուք միջամտէք անգլիական զինուորական կեղծոնին մօտ , որպէսզի այդ զիւրութիւնը ինծի տան :

Խոստացայ այդ միջամտութիւնը ընել մեր կողմէն , առանց հաստատ գիտնալու , թէ մեր միջամտութիւնը արժէք մը պիտի ունենամ : Այդպէս ալ ըսի իրեն :

Գիտէի , թէ Ֆերիտ փաշայի դահլիճին անկումէն յետոյ , Պոլսոյ թուրք կառավարական շրջանակներուն մէջ բաւական մեծ հակառակութիւն մը կար քիւրդ փաշային դէմ եւ ինք ապահով չէր Պոլսոյ մէջ : Այդ պատճառով նախազուսացուցի զինքը , որ կրնայ անակնկալօրէն ձերբակալուիլ : Փաշան շատ ամբարտաւան ձեւով յայտարարեց , թէ ոչ ոք կը համարձակի իրեն ձեռք դպցնելու :

Մեկնելէ անմիջապէս յետոյ , առանց ժա-